

Մի. «Հարք. Ետան» (պատճառուած Ե.Ըն ՏԼՄԿ ՎՅՈՒՆ). 4, 22. Թ. καὶ ἀπέστρεψεν αὐτοὺς ἀφ' ἐξουίας ἀποσκευῆς, Մի. «Եւ զար- ձուցին յիւրեանս զՁեռնս Բայց բանք հին են (միայն Երրայականով կրնայ բացատրուիլ). 5, 12. Թ. καὶ Ἰανὺν ὁ γράμματεὺς ἐν Βαβυλ, Մի. « և Յանի և Սափանս անդէն ի Բիշուփ» (= Ե). և այլն: Ինչ ինչ պարագայից մէջ Մի. տկնայալսնի կը միաբանի վուլ.ին հետ, այսպէս Ա. 1, 51, ուր Մի. ճշդիւ կը ճա- նաչէ վուլկայայի յաւելումը առաջնորդաց յաշորութեան մասին յետ կործանման թա- ցատրական իշխանութեան: Շատ հաւանա- կան է որ Մի. վուլկայան թարգմանած ըլլայ, կամ գէթ ճանչցեր և ի նկատի ու- նեցեր է: Եթէ որ և իցէ կերպով Մի. վուլ- կայայն առած ըլլար, պիտի մասնէր զինք շատ տեղեր ինչպէս Ա. 2, 55 կամ 4, 12:


Վերը ծրագրուած տեսութեանց վրայ հիմ- նուած, մասնաւորապէս թէ Մի. կը ջանայ միշտ Ե. բնագրին հաւատարիմ մնալ, թէ և ոչ միշտ յաջողութեամբ, այնպիսի տեղեր ուր Թ. կերպով մի տարակուսած է (որ. Ա. 4, 22) — վերջապէս հաւանական կ'երեւի մեզ որ ի Մի. Թէոդոտիոնի Միացորդաց թարգմանութիւնը մեզի պահուած ըլլայ:

Նոյնին վրայ այսպէս կը խորհինք, որ Թէոդոտիոնի յունարէն բնագիրը ասորիէ մը երրորդ կամ չորրորդ դարու մէջ ասորերէն թարգմանուած և այս ասորական թարգմա- նութիւնը հայէ մը հինգերորդ դարու սկիզբը թարգմանուած է, միշտ 432 տարին յա- ռաջ: Յետին թուականս ասոր կարեւոր է որ, 432 տարին ի վեր, յորում Աշտիշատի ժողովը տեղի ունեցաւ, թարգմանութիւնը յունարէն Առտուածաշնչին ի հայերէն՝ սկսաւ Այսուհետեւ ամէն հայ աստուածաբանի Ս. Գրոց յատուի անուանց յունական ձեւը ըն- տանի էին: Այս բանս ասկայն Մի. ի թարգ- մանչին քով տեղի չունի, ապա թէ ոչ ան- կտրելի կ'ըլլար իրեն գրել Թարշիշ փոխա- նակ Թարսիս և Իշխանաս փոխանակ Աս- քանաքի:

Եթէ ճիշդ է մեր ենթադրութիւնը — և որ ենթադրութեան աւելի բան մի պէտք չէ ըլ- լայ — այլ ևս շեշտելու պէտք չկայ քննա-

կան արեւը, զոր մեր բնագիրը իրեն կը յատկացնէ: Դեռ չքննած թէ այս հայերէն բնագիրը ինչ աղերս ունի Ե.ին, Թ.ին Պ.ին և վուլ.ին հետ, ապահով դատաստան մի բնականապէս անկարելի է: Միացորդաց գրքին այս տեսակետով երկ մի, հայագիտի մը, որ նաեւ հին կտակարանի մեկնութեան հմուտ ըլլայ, յիշատի գովելի և երախտեաց արժանի աշխատութիւն մի պիտի ըլլայ: Նո- ռագիւտ բնագրին այսպիսի հիմնական ու- ռումնասիրութիւն մի, պիտի ցուցնէ բոլոր կարեւորութիւնը ծառայութեանը, զոր Պ. ուսուցիչ խալաթեանց իւր դիւտով և անոր խնամով հրաժարականութեամբ մատոյց հին կտակարանի գիտութեան:

Տ. ՖԵՏԻՐ



ՂՈՒՍՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԽԱՃԻՑ ԵՒ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԵԱՆ ՇԱՐԱԿԱՆԱՑ



ԳԼ. Ա.

Հիմունք գործոյս.

Մեր շարականաց երգեցողութեան կա- նոնաց և նորա խաղից գորութեան վերա- հասու ըլլալու համար, շատ ցաւալի է ի նախնեաց գրաւոր կատարեալ պրուած մը ձեռ- քերիս հասած չըլլալը. որով և զարեւու շրջանին մէջ աւանդութեամբ առ մեզ հա- սած անկատար ուսուցչութիւնն ալ ազօտա- ցած՝ և կորսուած անոր օրէնքները. այնպէս զի այժմեան ժամանակիս մէջ, թերեւս կա- ռենանք ըսել, թէ այդ ազօտ գիտութիւնն ալ շատ քիչերու ծանօթ է, և խաղերու նշա- նակութիւնը անծանօթ. որով և շարականաց երգեցողութիւնն՝ ըստ հաճոյս և ըստ քաղ- ցրաձայնութեան երգողին կը կատարուի:

Իրաց այս պայմանին մէջ հետաքնին միտք մը ուրիշ միջոց չունի պարզելու այս կա- բեւոր և ազօտացեալ ազգային գիտութեան

մասը՝ բայց օտար ազգաց նոյն ժամանակին եկեղեցական երգեցողութեան հետադատութեան մէջ։ Այդ հետադատութիւնը վերահասու կ'ընէ զմեզ, թէ՛ նոյն է եղեր, նուազ զանազանութեամբ, Յունաց, Ասորաց, Լատինաց, Հայոց և այլն երգեցողութեան աբուխաւը։ և այդ փոքր զանազանութեան ալ՝ լեզուաց կազմութիւնն կ'երեւի անհրաժեշտ պատճառ։ որովհետեւ լեզուաց ումանց բառերը շեշտաւոր են, ինչպէս յոյսիրը, լատինիրը, և նոյն շեշտակիր վանկին վրայ անհրաժեշտ հարկ է երկարել ձայնը։ մինչպէս հայ լեզուն անշեշտ լինելով, ազատ է այդ օրէնքէն, և ամէն վանկի վրայ կրնայ երկարել ձայնը, ըստ պահանջելոյ երգոյն։ բայց վանկ մը երկարելու համար հարկ էր յատուկ նշան մ'ունենալ։ Որով թէպէտ հասարակաց օրինոք մը յերկարեալ էր երգեցողութեան աբուխաւը, բայց ըստ պիտոյից լեզուաց ազգաց, կ'երեւի յատկեր և յարմարներ են յատուկ խաղեր, իրենց պէտքը լեցընելու համար՝ միշտ հաստատուն բռնելով հասարակաց օրինաց բնական ձեւերը։

Որովհետեւ լատին եկեղեցւոյ երգեցողութիւնը, զոր Մեծն Գրիգոր Պապ եօթներորդ դարուն ի կարգի դրած է, և իր անուամբ Գրիգորեան երգ կը կոչուի, կամ Canto fermo, խորաբնիկ ուսումնասիրած են այժմ և անոր օրէնքները բացայայտ ի լոյս հանած, մեծ լոյս և առաջնորդութիւն է մեզի, բազմապէս և մերը անոր հետ և անով լուսաւորել և պարզել և գմբըր։ Եւ յիրաւի՝ երբ այս ուղղութեամբ կը սկսինք հետազօտել և ուսանել մեր շարականաց երգեցողութեան օրէնքները և խաղից զօրութիւնը, կը հասնինք պայծառ կէտ մը, և այն ազօտ և անծանօթ խաղերը և օրէնքները քիչ շատ կը պարզին մեր առջեւ, ինչպէս և որչափ պարզուած է Գրիգորեան երգը՝ Վատինաց համար։ և այս բազմապատկիւնն է զոր այժմ կը ներկայացունենք հասարակութեան, ի մէջ բերելով երգեցողութեան արուեստին մէջ զլիաւոր պահանջուած կարեւոր կանոնները և նշանները, և հետեւաբար փնտռելով զանոնք Գրիգորեան և հայկական երգիչազգութեան մէջ։

Արդ, երգեցողութեան զլիաւոր կանոնները պարզ են, և քանի մը քանի մէջ կը բովանդակուին, և նշանաց կը կարօտին, որք են։

Ա. Ձայնաստիճան ցուցընող նշանը։ ինչպէս do, re, mi, և այլն կամ neume առ լատինս և կամ ի մեզ խաղք։

Բ. Ձայնի տեւողութեան նշանը։ ինչպէս Breve, Semibreve և այլն։

Գ. Ձայնահատ կամ ձայնի հանգստեան նշանը։ ինչպէս Pausa։

Դ. Ժամանակի բախման նշանը։ Tempo։

Ե. Երգին բանաւոյ նշանը։ Chiaue։ կամ ըստ մեզ Ձայն, ինչպէս ԱՁ, ԲՁ, և այլն, Tono ըստ Գրիգորեանի։

Տեսնենք արդ մէկիկ մէկիկ Գրիգորեան երգեցողութեան մէջ այս զլիաւոր պահանջուած օրէնքները, որոնց պիտայ դնելով մեր շարականաց խաղերը ու կանոնները, նոյն պիտի գտնենք երկուքն ալ, որով պիտի պարզին մեր խաղերն ու երգեցողութեան կանոնները, ինչպէս են այսօր լատինացը։

ԳԼՈՒԽ Բ.

Սուղ ակնարկ մը ընդհանուր խաղերու կամ լատինաց neumes-երու վրայ։


Յառաջ քան զամենայն պէտք է գիտնալ, որ մենք այժմեան ժամանակէս մէջ եւրօպական նոգայի վարժած ըլլալով, որով երգ մը ամենակատարեալ կերպով կրնայ գրուիլ, ինչպէս այբուբենով բառերը, սոյն գաղափարով՝ հետամուտ կ'ըլլանք նախնեաց երգաց զրուցեան արուեստին, և կը փնտռենք և կը համարինք թէ անոնց մէջ ալ նոյն կատարեալ գրութեան կերպը պիտի գտնենք։ Մինչպէս ամենայն հնոց ազգաց մէջ երգերը ի զրի առնելոյ համար՝ պէտք չէ ամենեւին կատարեալ գրութիւն մը փնտռել, որ բովանդակէ յինքեան ամենայն մանրամասնութեամբ եղանակի մը ամենայն ձայնից աստիճանադրութիւնը, սկսելու աստիճանը, տեւողութիւնը, ոյժը, միջոցները, հանդիսաները և այլն։ Այսպէս խաղից կամ երգոց գրութիւնը շատ անկատար էր առ նախնեօք՝

թէ՛ ազգիւս ե թէ օտարազգեաց մէջ, ե եր-
գերը զլիաւորապէս աւանդութեամբ կ'ուսու-
ցանէին, ինչպէս ցարդ մենք կ'ընենք. իսկ
խաղերը կամ առ լատինս neumes բռնած-
ները՝ առաջնորդ մը յուշարար մը միայն էին,
անկարող լինելով իրենք իրենց, առանց ա-
ւանդական բերանացի կամ գործիական ու-
սուցչութեան՝ երգ մը երգուելու:

Խաղից կամ neumesներու վրայ պայծառ
գաղափար մը կազմելու համար՝ բաղդատենք
զանանք այժմեան եւրոպական նոգայից հետ:
Այժմեան եւրոպական նոգայն երկու կա-
րեւոր յատկութիւն պարունակելով՝ յիշեան՝
կատարեալ է. վասն զի գծերու վրայ գրուե-
լով, որ գծին վրայ որ զրուի՝ կը յայտնուի
ձայնին ճիշդ աստիճանը. և ինչ ձեւով որ
գրուած է՝ կը ցուցնէ անոր տեւողութիւնը.
որով երգ մը իր ամենայն ճշգրտեամբը
կրնայ նոգայով զրուիլ, որ և անկորուստ կը
մնայ, որչափ տեւէ համայնատարած նոգայն:
Իսկ խաղը կամ neumesները չունին նո-
գայից այս կատարելութիւնները, չունին հաս-
տատուն աստիճան, այլ իրենց ձեւերովը կը
ցուցնեն միայն ձայնը բարձրացունել կամ
ցածջունել. և մինչ նոգա մը միշտ մի միայն
ձայնի աստիճան է տեւողութիւն կը ցուցնէ՝
խաղերը կամ neumesները ընդհակառակն,
մի, երկու, երեք և մինչեւ խումբ մը աս-
տիճանաց ելեւէջը կը ցուցնեն, և այն՝
առանց հաստատուն աստիճանի, առանց
միշտ նոյն հեռաւորութեան ձայնից. ինչպէս
պարտիկ մը, վերահաղաղ մը, կամ ներքեւ-
խաղ մը և այլն. ինչպէս neumesներէս ըսենք
Podatus, Clivis, Torculus, Climacus և այլն.
որոնք խումբ մը ձայններ հանելու նշաններ
են՝ և կրնան այլ և այլ աստիճան երգուիլ,
և այլ և այլ հեռաւորութեամբ ձայնից: Ը-
սածնիս պարզազոյն հասկըցնելու համար,
իսկնք հոս այս neumesները, իրենց ձեւերով,
և այդ ձեւերը Գրիգորեան և արդի նոգայի
վրայ առնելով:

Podatusի ձեւը այս է /'. որուն կը հա-
մապատասխանէ մեր փոշը /', ճիշդ իր ձեւ-
ովը և զօրութեամբը. արդ, այս մէկ նշանը
կրնայ երգուիլ


Օրիհակ




Արդի նոգայով




Clivis ձեւը կը զրուի /'. որուն կը հա-
մապատասխանէ մեր փշադարձը /', ճիշդ իր
ձեւովը և զօրութեամբ. արդ այս մէկ նշա-
նը կ'երգըցուի




Արդի նոգայով




Torculusի ձեւն է /', որուն նմանը ունիմք
և մենք /'. և կ'երգըցուի



Արդի նոգայով



Climacusի ձեւն է /:, որուն կը համա-
պատասխանէ մեր վերնակէտը կամ փոքր
վերնախաղը /'. և բոտ լատինաց՝ այդ neumes
կրնայ նաեւ երեք կէտերով ալ վար իջնալ,
և այն աստիճան կ'առնու այս ձեւը /:, որուն
կը համապատասխանէ մեր վերնախաղը /',
և կ'երգըցուի.






Արդի նոգայով




Ասոնք են զիստորապէս նողայից և neumesներու կամ խազից զօրութեանց զանազանութիւնը. որով յայտնապէս կը տեսնուի թէ խազերը կամ neumesները իրենց անհաստատութեամբը ձայնից՝ շատ անկատար են բաղդատմամբ երոպական նողայից. բայց խազերու հմուտ եղողին շատ կ'առաջնորդեն, կը դիրացունեն երգիւր, և մասամբ իւր ճշգրտութիւն մը կ'ուսուցանեն. Ուստի ամենա-կարեւոր է գիտնալ, թէ խազերն ունին զօրութիւն մը, բայց ոչ ըստ երոպական նողային, որք թէպէտ կը ցուցնեն նաեւ ձայնից աստիճան, բայց ոչ հաստատուն և ոչ միշտ նոյն՝ ինչպէս եւրոպականը. այլ այս աստիճան ըստածը՝ ձայնի ելեւել կամ դարձուած կամ ձայն հանելու կերպն է. որով neumesները կամ խազերը նշաններ են կամ ձեւեր՝ որք կը ցուցնեն թէ ինչ կերպով կամ ելեւելով կամ դարձուածով պէտք է ձայնը հանել:

Հետաքրքրական է գիտնալ միանգամայն որ Լատինք ալ սկզբան խազերը բառերուն վրայ կը նշանակէին, ինչպէս մեր շարականաց խազերը նշանակուած են: Դնենք հոս հին Լատին ձեռագրէ յուսանկարով հանուած օրինակ մը:




Բայց Լատինք տեսնելով թէ խազերը բարձրանալ ու ցածնալ մը կը ցուցնեն արդարեւ, բայց ճիշդ աստիճանը չեն ցուցնիր, խորհեցան սկզբան մէկ զիծ մը քաշել և վրան F գիրը գնել, ըսել ուղելով որ այդ


գծին վրայ եղած կէտը Fa աստիճան է, անկէ վեր եղածները կարգաւ կը բարձրանան. իսկ վար եղածները կարգաւ կը ցածնան. ինչպէս վերի ձեռագրէն, և այս օրինակէն կը տեսնուի.




Պարզ էր գիտը, բայց կէտերը որչափ գծէն կը հեռանային՝ այնչափ դժուարին կ'ըլլար զրոյին համար անոնց ճիշդ հեռաւորութիւնը սահմանել, ինչպէս երգչին համար զայն գուշակելը: Ասոր համար երկրորդ զիծ մ'ալ սահմանեցին, առաջինէն հինգ աստիճան բարձր, Սե կամ Do, համարելով թէ անով ապահով կրնար երգուիլ. տես և վերջիցեալ ձեռագրին պատասխիկը.



Բայց տեսնելով դարձեալ որ la նողայն կը շփոթէր կամ solի կամ siի հետ՝ երրորդ զիծ մ'ալ քաշեցին Լաին համար և եղաւ այս.



Վերջապէս Դեի համար ալ չորրորդ զիծ մը քաշելով բաւական համարեցան Գրիգորեան երգին կատարելագործութեան:



Այսպէս իրենցը երթալով կատարելագործեցաւ, և հասաւ այժմեան կատարելութեան, իսկ մերը մնաց իր առաջին անկատարութեան մէջ. անտարակոյս քաղաքական պարագայից պատճառաւ:

Շարայարեղի